

(ԵՀՀԳ-ԲՏՄՆ/ ENPI-SEIS)

2011-2014թթ. Հայաստանը, նշանակված ազգային համակարգողների միջոցով, մասնակցել է ՄԱԿ-ի ԵՏՀ ԵԽ «Եվրոպական Հարևանության և Համագործակցության Գործիք-Բնապահպանական տեղեկատվական միասնական համակարգ» (ԵՀՀԳ-ԲՏՄՆ/ ENPI-SEIS) 4 ամյա ծրագրի աշխատանքներին: ԵՀՀԳ-ԲՏՄՆ/ ENPI-SEIS ծրագրի նպատակը շահառու երկրներին օժանդակություն ցուցաբերելն էր՝ ԲՏՄՆ/SEIS սկզբունքներին համապատասխան շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ իրենց ազգային տեղեկատվական համակարգի ստեղծման կամ ընդլայնման հարցում:

ԵՀՀԳ-ԲՏՄՆ/ ENPI-SEIS) ծրագիրը ՄԱԿ-ի ԵՏՀ Բնապահպանական Մոնիթորինգի ու Գնահատման Աշխատանքային Խմբի (ԲՏԳ ԱԽ) և Նպատակային Աշխատանքային Խմբի (ՆԱԽ) հետ միասին մշակել և հավանության են արժանացել թվով 10 ոլորտային տարածաշրջանային բնապահպանական տեղեկատվական ցուցանիշների համախումբը, որոնք ներառում են ցուցանիշի սահմանումը, հաշվառման և հաշվարկման մեթոդաբանությունը, միջազգային համադրելիության ապահովումը, օգտագործման շրջանակները, կապը/կախվածությունն այլ ցուցանիշների հետ և այլն: Տեղեկատվական ցուցանիշների մշակումը պայմանավորված էր նաև նրանով, որ շրջակա միջավայրի վիճակի գնահատման վերաբերյալ զեկույցների պատրաստման համար կիրառվեն այն ցուցանիշների խմբերը, որոնք համադրելի կլինեն Համա-Եվրոպական զեկույցների պատրաստման համար կիրառվող ցուցանիշների հետ:

Օժանդակություն է ցուցաբերվել թեմատիկ (մթնոլորտի, ջրերի, թափոնների) տվյալների հոսքերի կառավարման համար՝ տվյալների տրամադրման մեխանիզմների ստեղծման ու կարողությունների ամրապնդման նպատակով կարիքների բացահայտման ուղղությամբ:

Ցուցաբերվել է թեմատիկ օժանդակություն Երկրների մակարդակով, որի արդյունքում գնահատվել են ազգային կարիքները, այդ թվում՝

- Մշակվել և ընդունվել են <<СТРАHOBЫE ПPOΦИЛИ>> և <<Ազգային Հաշվետվություններ>> փաստաթղթերը, ջրերն աղտոտող նյութերի արտահոսքերի, ջերմոցային գազերի ու մթնոլորտն աղտոտող նյութերի արտանետումների տվյալների հոսքերի կառավարման Ղեկավար փաստաթղթերը, կենսաբազմազանության մոնիտորինգի իրականացման և տեղեկատվական հոսքերի կառավարման Ղեկավար սկզբունքները, հողերի քիմիական աղտոտվածության մոնիտորինգի ուղեցույցը և որպես էկոքաղաքականության գործիք, "Խոհարարական գիրք" ("Cook book") անվանմամբ Բնապահպանական տեղեկատվական համակարգի կառավարման մեթոդաբանական ուղեցույցը;

- Կազմակերպվել են մասնագետների վերապատրաստման ազգային և տարածաշրջանային բազմաթիվ սեմինարներ ու հանդիպումներ, որին Հայաստանից մասնակցել են 18 ներկայացուցիչներ/մասնագետներ;

- Սևանա լճի ջրային ռեսուրսների մասով իրականացվել է “SEIS Sevan” Ազգային պորտալի ստեղծման փորձնական ծրագիրը:

- 2011թ. երկրներից նշանակված Ծրագրի ղեկավար կոմիտեի անդամների, այդ թվում Հայաստանի մասնակցությամբ պատրաստվել է Աստանայում կայացած “Շրջակա միջավայրը Եվրոպայի համար” նախարարների համաժողովին ներկայացվող “Շրջակա միջավայրի վիճակի գնահատման գնահատում” Եվրոպական Ջեկույցը, որում ներառված էր նաև Հայաստանը և կատարվել են 2016թ.-ին “Շրջակա միջավայրը Եվրոպայի համար” նախարարների համաժողովին ներկայացվող “Շրջակա միջավայրի վիճակի գնահատման գնահատում” Համա- Եվրոպական Ջեկույցի նախապատրաստական աշխատանքները: